**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրի Մանուշյան փողոց 4/5 հասցեում մշակույթի տան վերակառուցման**

**2-րդ հանրային լսում**

***22.12. 2025թ.***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով 2025թ. դեկտեմբերի 22-ին ժամը 11:00-ին Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքապետարանում տեղի ունեցավ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին բնակավայրի Մանուշյան փողոց 4/5 հասցեում մշակույթի տան վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

ՇՄԱԳ-ի ներկայացուցիչ Սուսաննա Անտոնյանը ներկաներին ներկայացրեց նախատեսվող շենքի վերակառուցման ընթացքում հնարավոր առաջացող բնապահպանական ռիսկերը և դրանց կանխարգելման եղանակները:

Էջմիածին բնակավայրի բնակիչները բարձրացրեցին իրենց հուզող հարցերը, որոնք վերաբերում էին նախկին մշակույթի տանը, որը վերակառուցումից հետո դառնալու է մանկապարտեզ:

Սուսաննա Անտոնյանը հավելեց, որ նախատեսվող գործունեության տարածքում և հարակից մոտակա տարածքներում բացակայում են Կարմիր Գրքի բուսատեսակները, կենդանատեսակները, ինչպես նաև պատմության, բնական հուշարձանները և մակերևույթային ջրերը:

Քննարկվեց տարածքի բարեկարգման և կանաչապատման հարցը: Ներկայացվեց, որ կանաչապատման լուծումները համաձայնեցվելու է համայնքապետարանի հետ և ընտրվելու են տարածքին բնորոշ բուսատեսակներ:

Հանրային լսմանը այլ առաջարկներ և դիտողություններ չներկայացվեցին:

**ՇՄԱՓԿ փորձագետ՝** **Սուսաննա Անտոնյան**

**Նախաձեռնող կողմի ներկայացուցիչ՝**